

## 4.2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Հայաստանի Հանրապետության պետական, համայնքների և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեների վերաբերյալ վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններից (Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ) համապատասխան բյուջեների եկամուտների և ծախսերի վերաբերյալ վիճակագրական տվյալների (հաշվարկված Արժույթի միջազգային հիմնադրամի «Պետական ֆինանսների վիճակագրություն» ուղեցույցով (մեթոդաբանությամբ) սահմանված սկզբունքների ու հասկացությունների հիման վրա) ստացման, ամփոփման և հրապարակման աշխատանքները, այդ թվում՝ պետական բյուջեի մասով՝ ամսական պարբերականությամբ, համայնքների և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեների մասով՝ եռամսյակային պարբերականությամբ: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից եռամսյակային պարբերականությամբ ստացվել, մշակվել, ամփոփվել և հրապարակվել են նաև Հայաստանի Հանրապետության պետական պարտքի (ներքին և արտաքին) վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներն՝ ըստ վարկատուների և վարկառուների:

Դրամավարկային վիճակագրության առումով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից (որպես համապատասխան բնագավառի վարչական վիճակագրություն իրականացնող մարմին), պարբերաբար ստացվել, ամփոփվել և հրապարակվել են դրամավարկային և բանկային համակարգի, արտարժույթների ամենօրյա հաշվարկային փոխարժեքների, իսկ 2006թ.-ից՝ նաև ֆինանսական ոչ բանկային կազմակերպությունների ենթահատվածի հիմնական ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները: Նույն ժամանակահատվածում, Ծառայության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկատվության փոխանակման համաձայնագրի համաձայն՝ սահմանված պարբերականությամբ վերջինիս է տրամադրվել կազմակերպությունների ֆինանսների մասին վիճակագրական ամփոփ տեղեկատվությունը:

Ազգային հաշիվների համակարգի ամբողջացման շրջանակում՝ «Ֆինանսական հաշիվ» կազմման նպատակով Եվրամիության վիճակագրական ծառայության ՏԱՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն-8» պայմանագրի «Ֆինանսների վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում 2006թ. իրականացվել է երկփուլ հետազոտություն՝ հանրապետությունում գրանցված խոշոր ու միջին ոչ ֆինանսական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների շրջանում՝ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակով (2003-2005թթ. արդյունքներով): Հետազոտության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համատեղ աշխատանքի արդյունքում ձևավորվել է ֆինանսական հաշիվ կազմման համար անհրաժեշտ տեղեկատվական բազան՝ ըստ ֆինանսական գործիքների և տնտեսության հատվածների:

Նախագծի շրջանակում մշակվել է ֆինանսական հաշվի կազմման նախնական ձևաչափը: Հետագոտության արդյունքներով հրապարակվել է նաև զեկույց՝ հայերեն և անգլերեն:

Կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների վիճակագրության բնագավառում, կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը բնութագրող վիճակագրական դիտարկման փաստաթղթերի ձևերը համապատասխանեցվել են Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման նոր ստանդարտների պահանջներին:

Արդիականացվել է պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների մուտքագրման, մշակման, ստացված արդյունքների տարածման և ամփոփ ելքային աղյուսակների ստացման համար համակարգչային ծրագիրը :

Պետական ֆինանսների, կազմակերպությունների ֆինանսների, դրամավարկային միջնորդության համակարգի ցուցանիշների, արտարժույթային փոխարժեքների դինամիկայի, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի գործունեությունը բնութագրող տվյալների հիման վրա յուրաքանչյուր տարի հրատարակվել է «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն» վիճակագրական ժողովածուն՝ ցուցանիշների դինամիկ շարքերով: